

Ադրբեջանի տեղը Եվրամիության գազային ճգնաժամի հաղթահարման գործընթացում

ՏԼՈՐԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Բոյունովի պետական համալսարան

Արևմուտքի և Ռուսաստանի աշխարհաքաղաքական դիմակայության կտրուկ խորացումը, որի գազաթնակետն է ռուս-ուկրաինական պատերազմը, ճգնաժամային իրավիճակներ է ստեղծել տարբեր ոլորտներում, որոնցից ամենատուր դրսևորումը վերաբերում է Եվրամիության էներգետիկ անվտանգության խնդիրներին: Ավանդաբար ռուսական գազից մեծ կախվածություն ունեցող Եվրոպան, հետևելով Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներին, հրաժարվել է ռուսական խողովակաշարային գազի ներկրումից և բախվել է բարդ խնդիրների: Արդ իրավիճակում ԵՄ պաշտոնյաները փորձում են գտնել գազի ներկրման նոր ուղիներ գազ արտահանող այլ երկրներից, սակայն հնարավորությունները սահմանափակ են ինչպես աշխարհագրական, այնպես էլ քաղաքական դրդապատճառներով: Հողվածում քննարկվում են ԵՄ գազային ճգնաժամի պատճառներն ու հնարավոր հանգուցալուծումները: Ճգնաժամի հաղթահարման համատեքստում անդրադարձ է կատարվում ԵՄ-Ադրբեջան էներգետիկ հարաբերություններին՝ մասնավորապես «Հարավային գազային միջանցքին»: Քննարկվում են դրա հնարավորությունները Եվրոպայի կարիքների ապահովման տեսակետից, ինչպես նաև «Հյուսիսային հոսք-2» գազատարի գործարկմանը՝ որպես իրական հնարավորություն ԵՄ գազային ճգնաժամի հաղթահարման գործում:

Բանալի բառեր

Եվրոպական միություն, Ադրբեջան, Ռուսաստան, կասպյան ավազան, էներգետիկ ճգնաժամ, էներգակիրներ

Նախաբան

2022թ. փետրվարին Ռուսաստանի սկսած հատուկ ռազմական գործողությունը Ուկրաինայի նկատմամբ դարձավ նոր աշխարհակարգի ձևավորման համար Արևմուտք-Ռուսաստան կոշտ դիմակայության գազաթնակետը՝ ԵՄ-ի համար առաջ բերելով նոր մարտահրավերներ: Դրանցից առավել բարդը՝ գազային

ճգնաժամը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Արևմուտքը՝ Միացյալ Նահանգների առաջնորդությամբ Ռուսաստանի նկատմամբ սահմանեց մի շարք պատժամիջոցներ, որոնց շարքում կարևոր տեղ էր զբաղեցնում հրաժարումը ռուսական էներգակիրների, մասնավորապես գազի ներկրումից:¹ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՄ-ն մինչ այդ էլ մեծ ջանքեր է գործադրել բնական գազի ներկրման աղբյուրների բազմազանեցման ուղղությամբ, սակայն առանց էական հաջողության, և, որ Եվրոպայի համար գազի կարիքներն անշեղ աճ են արձանագրում, կարելի է պնդել, որ այդ մարտահրավերները ամենամեծ խնդիրներն են առաջացրել ԵՄ-ի համար: Ավելին, եթե պատժամիջոցների կիրառման սկզբնական փուլում համարվում էր, որ Ռուսաստանի տնտեսությունը ծանր հարված կստանա՝ զրկվելով էներգակիրների արտահանման շնորհիվ բյուջեի համար խիստ զգալի ֆինանսական ներհոսքից և դա կստիպի արագորեն դադարեցնել ռազմական գործողությունները, ապա հետագա զարգացումները ցույց տվեցին, որ այդ հույսերը չեն արդարանում և Եվրոպան ստիպված է լինելու ծանր ժամանակներ ապրել ռուսական գազից հրաժարվելու պատճառով: Ընդ որում, այդ հետևանքները սպառնում են սոցիալ-տնտեսականից վերափոխվել քաղաքականի՝ անկանխատեսելի հետևանքներով: Հետևաբար գազային ճգնաժամի հաղթահարումը ԵՄ համար ունի մեծ կարևորություն և ժամանակակից մարտահրավերների շարքում ամենավտանգավորներից մեկն է:

Եվրոպական համայնքի ստեղծման պահից սկսած էներգետիկ խնդիրները ձեռք են բերել առանցքային նշանակություն: Ձևավորման պահից սկսած Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Բենիլյուքսի սահմանափակ ներքին էներգետիկ պաշարների պատճառով ԵՄ-ն մեծապես կախված էր արտաքին էներգամա-

¹ Թորոպյան Ս., Նոր աշխարհակարգի ձևավորման ազդեցությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վրա. Ինքնորոշում, թե՞ ցեղասպանություն, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2022, 1, 5-52

տակարարումից:² ԵՄ-ի ընդլայնման հետ մեկտեղ էներգետիկ խնդիրներն ավելի ակներև դարձան, և ԵՄ-ն սկսեց փնտրել արտաքին մատակարարների՝ էներգետիկ ներքին կարիքները բավարարվելու համար: Ժամանակակից ԵՄ-ն կարիքների կեսից ավելին՝ մոտ 61%-ը, բավարարում է ներմուծմամբ³:

2007թ. Լիսաբոնում տեղի ունեցած էներգետիկ ֆորումի ժամանակ Եվրոպայի էներգետիկայի հանձնաժողովի անդամ Ա. Պիրլագսը առաջարկում էր էներգետիկ անվտանգության խնդիրը դիտարկել ոչ թե ազգային անվտանգության մակարդակում այլ՝ Եվրոպական⁴: Նա առաջարկում էր ստեղծել ստեղծել Եվրոպական միասնական էներգետիկ համայնք, որի հիմնական նպատակն էր բարձրացնել էներգամատակարարման անվտանգությունը: Այդ ուղղությամբ զգալի աշխատանք արդեն արվել է, մի շարք փորձեր են արվել էներգակիրների ներմուծման աղբյուրների և ուղիների բզմազանեցման ուղղությամբ, սակայն էներգակիրների արդյունահանման հանքավայրերի սահմանափակության պտճառով խնդրի լիարժեք լուծում չի գտնվել: Ավանդաբար Եվրոպայի հմր անհրաժեշտ գազի հիմնական մատակարարը եղել է Ռուսստանը (նախկինում՝ Խորհրդային Միությունը):

Ռուսաստանից էներգակիրների մատակարարումների անվտանգության վերաբերյալ մտահոգություններն ի հայտ եկան հատկապես 2005-2006թթ. ձմռանը ռուսական գազի մատակարարումների ընդհատումների պատճառով՝ պայմանավորված ռուս-ուկրաինական գազային ճգնաժամով⁵: 2008թ. ռուս-վրացական և 2014թ. ռուս-ուկրաինական պատերազմների ժամանակ ԵՄ

²Գևորգյան Ն., ԵՄ-ի ռազմավարական շահերը Հարավային Կովկասում. անտեսումից՝ ռազմավարական հետաքրքրություն, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 1(2), 2015, 85-113:

³Маноило А., Катков И., Политические аспекты реализации проекта «Северный поток – 2», *Вестник КемГУ*, 5(1), 2020, 16-24.

⁴Пашиковская И., Внешняя энергетическая политика Европейского Союза, *Мировая Экономика и Международные Отношения*, 1, 2009, 61-69.

⁵Գևորգյան Ն., Նշվ. աշխ.:

մտահոգություններն ավելի լուրջ հիմքեր ստացան: Այդուհնդերձ, թեպետ այս ճգնաժամերը տարաձայնությունների առիթ էին ստեղծել ԵՄ-Ռուսաստան հարաբերություններում, սակայն դրանք լուրջ ազդեցություն չէին ունեցել նրանց էներգետիկ համագործակցության վրա⁶: Այնուամենայնիվ, նույնը չի կարելի ասել 2022թ. սկսված ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցության մասին, երբ պատերազմից մի քանի օր առաջ ԵՄ-ի ներկայացրած պատժամիջոցների փաթեթի մեջ ներառված էր նաև «Հյուսիսային Հոսք 2»-ը⁷, որի հավաստագրումը դադարեցվեց ռուս-ուկրաինական պատերազմի առաջին իսկ օրվանից՝ նպաստելով ԽՍՀՄ փլուզումից հետո ԵՄ ամենախորը էներգետիկ ճգնաժամին:

«Հյուսիսային հոսք-2»-ը՝ որպես ելք ԵՄ էներգետիկ ճգնաժամից

Ռուսաստանը բնական գազի առաջատար մատակարարն է ոչ միայն Եվրոպայի համար ընդհնուր առմամբ, այլև, մասնավորապես և առաջին հերթին՝ Գերմանիայի համար: Գերմանական ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն 2020թ. Ռուսաստանի Դաշնությունը եվրոպական երկրներին մատակարարել է 168 միլիարդ խորանարդ մետր գազ, որից 56,3 միլիարդ խորանարդ մետրը՝ Գերմանիային, որը կազմել է նրա՝ խողովակաշարով ստացած գազի ընդհանուր ներմուծման 55,2%⁸: Գազի մատակարարման պահանջները ինչպես Գերմանիայում այնպես էլ ամբողջ ԵՄ-ում շարունակաբար ավելանում են: Հենց այս տնտեսական պահանջները բավարարելուն էին ուղղված «Հյուսիսային Հոսք-2» գազատարի կառուցման աշխատանքները:

⁶Nitoiu C., Sus M., Introduction: The Rise of Geopolitics in the EU's Approach in its Eastern Neighbourhood, *Geopolitics*, 24, 1, 2019, 1-19.

⁷ EU sanctions package on Russia includes Nord Stream 2, Austria says, <https://www.reuters.com/business/energy/eu-sanctions-package-russia-includes-nord-stream-2-austria-says-2022-02-21/>, (02.12.2022).

⁸Белов В., Проект «Северный Поток – 2» – шансы и риски реализации, *Научно-аналитический вестник ИЕРАН*, 3, 2018, 74-80.

Թեպետ այդ գազատարի նախատեսված թողունակությունը բավական մեծ է՝ տարեկան 55 միլիարդ խոնարադ մետր գազ, նախագիծն արժանացել էր նախ Բրյուսելի պաշտոնյաների և քաղաքական գործիչների, ԵՄ մի շարք երկրների, ապա Ուկրաինայի և Միացյալ Նահանգների կոշտ դիմադրությանը⁹:

Եթե «Հյուսիսային հոսք» գազատարը ԵՄ-ն ընկալում էր որպես «ընդհանուր շահերի» նախագիծ, որի իրականացման հիմնական փաստարկը Եվրամիության էներգետիկ անվտանգության մեծացումն էր, ապա իրերը այլ ընթացք ստացան «Հյուսիսային հոսք-2» գազատարի կառուցման ժամանակ: Հիմնական հարցերից մեկն այն էր, թե ինչպես են մեկնաբանում էներգետիկ անվտանգություն եզրույթը ՌԴ-ն և ԵՄ-ն: Բրյուսելում այն ընկալվում էր որպես էներգետիկ աղբյուրների բազմազանեցում, մինչդեռ ռուսական կողմն առաջարկում էր էներգետիկ անվտանգությունը հասկանալ որպես անվտանգության տարանցիկ երկրները բացառող երթուղիների բազմազանություն: Փոխըմբռնման տարբերությունը հանգեցրեց «Հյուսիսային հոսք-2» նախագծի վերաբերյալ հակասական գնահատականների. Ռուսաստանի կարծիքով, գազատարը ուղղված էր Եվրամիության էներգետիկ անվտանգության մեծացմանը, Բրյուսելի կարծիքով՝ էներգետիկ անվտանգության նվազմանը¹⁰:

ԵՄ-ն միասնական կարծիք չունեի «Հյուսիսային Հոսք-2» գազատարի վերաբերյալ: Հյուսիսարևմտյան Եվրոպայի երկրները այս նախագիծը համարում էին տնտեսական նախագիծ, իսկ ԵՄ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները գազատարը դիտարկում էի որպես Կրեմլի աշխարհաքաղաքական գործիք¹¹:

Գերմանիան «Հյուսիսային հոսք-2»-ի բացահայտ աջակիցն էր: Պաշտոնական դիրքորոշումը, որին անդրադարձել էր նաև Գերմանիայի նախկին կանցլեր Անգելա Մերկելը Եվրոպական

⁹Նույն տեղում:

¹⁰Стариков А., «Северный Поток-2»: Дилеммность Европейских энергетических интересов, *Науковедение*, 6, 2017, 1-11.

¹¹Նույն տեղում:

խորհրդի նիստի ժամանակ, այն էր, որ գազատարը առևտրային նախագիծ է, որը ներառում է մասնավոր ներդրողներ, և հետևաբար, կառավարությունը պետք է ձեռնպահ մնա միջամտելուց¹²: Գերմանական կառավարությունը բազմիցս շեշտել է նաև, որ գազատարը համահունչ է Եվրամիության գործունեության մասին պայմանագրի (Treaty on functioning the Eruoepan Union) 194-րդ հոդվածի նպատակներին, այն է՝ մատակարարման անվտանգության եւ էներգետիկ շուկայի գործունեության ապահովում, էներգետիկ ցանցերի փոխկապակցման խթանում¹³:

Թեպետ գազատրի տնտեսական նշանակությունը բավական բարձր էր, այնուամենայնիվ գազատարն ուներ նաև մեծ աշխարհաքաղաքական նշանակություն, որն էլ հենց առաջացրել էր Ուկրաինայի և ԱՄՆ-ի դժգոհությունը: Ուկրաինան դեմ էր գազատարի կառուցմանը, քանի որ այն չէր անցնելու իր տարածքով: Այսպիսով նվազում էր Ուկրաինայի ոչ միայն աշխահաքաղաքական դերը, այլև տարանցման տարեկան եկամուտները՝ շուրջ 2 միլիարդ դոլար¹⁴:

Ամերիկայի Միացյալ Նահանգները, իր հերթին, նույնպես լարված դիվանագիտական երկխոսության մեջ մտավ Գերմանիայի հետ «Հյուսիսայի հոսք-2» գատատարի կառուցման վերաբերյալ: 2017թ. ԱՄՆ-ն գազատարը դասեց եվրոպական անվտանգության հիմնական սպառնալիքների շարքին: 2017թ. օգոստոսից մինչև 2020թ. դեկտեմբերը Վաշինգտոնը, չնայած Բրյուսելի և Բեռլինի բողոքներին, օրենսդրական սահմանափակումներ և պատժամիջոցներ էր սահմանում նախագծի նկատմամբ: Միացյալ Նահանգները պատժամիջոցներ կիրառեց նաև գազատարի խողովակների

¹² Severin F., Nord Stream 2: Trust in Europe, *PolicyPerspectives*, 4, 2016, 1-4.

¹³ Gas pipeline Nord Stream 2 links Germany to Russia, but splits Europe, <https://www.cleanenergywire.org/factsheets/gas-pipeline-nord-stream-2-links-germany-russia-splits-europe>, (04.12.2022).

¹⁴ Lang K., Westphal, K., Nord Stream 2: A political and economic contextualisation, *Stiftung wissenschaft und politik-SWP- DeutschesInstitut für internationalepolitik und sicherheit*, 3, 2017, 5-39.

տեղադրման ծառայություններ մատուցող ընկերությունների դեմ, ապա՝ նավերի ապահովագրության, փորձարկման, հավաստագրման ծառայություններ մատուցող ընկերությունների դեմ, այդպիսով մինչև պատժամիջոցների ավարտը նախագիծը լքեց մոտ երկու տասնյակ ընկերություն¹⁵: Պաշտոնական Բեռլինը պատժամիջոցների կիրառումը համարում էր միջամտություն Եվրոպական պետությունների էներգետիկ քաղաքականությանը¹⁶:

Չնայած մի շարք տարաձայնություններին, նախատեսվում էր լուծել «Հյուսիսային հոսք-2»-ի տեխնիկական խնդիրները մինչև ամառ և գործարկել այն: Սակայն ռուս-ուկրաինական պատերազմը և ԵՄ պատժամիջոցների կիրառումը «Հյուսիսային հոսք-2» գազատարի վրա անհնար դարձրին վերջինիս շահագործումը: Այսպիսով, ԵՄ-ն կորցրեց տարեկան 55 միլիարդ խոնարադ մետր գազ, որը նախատեսում էր ունենալ էներգետիկ կարքիները հոգալու համար:

ԵՄ էներգետիկ ճգնաժամն ավելի խորացավ, երբ «Հյուսիսային հոսքը» ժամանակավորապես դադարեց գործարկվել «մեխանիկական տարրերի և ավտոմատացման համակարգերի փորձարկման» պատճառաբանությամբ¹⁷ և ապա, երբ սեպտեմբերի 26-ի ռմբակոծությունների հետևանքով վնասվեցին «Հյուսիսային հոսքի» բոլոր խողովակաշարերը, որի պատճառով գազատարը չի գործում¹⁸: Այնուամենայնիվ, «Հյուսիսային հոսք 2» գազատարի խողովակաշարերից մեկը պատրաստ է գործարկման, և ՌԴ նախագահ Վ. Պուտինն առաջարկել է վերսկսել գազի

¹⁵ Белов В., Перспективы газопровода «Северный Поток – 2», *Научно-аналитический вестник ИЕ РАН*, 4, 2021, 63-71.

¹⁶ Germany rejects U.S. sanctions against Nord Stream 2 as contrary to international law, <https://gpil.jura.uni-bonn.de/2021/01/germany-rejects-u-s-sanctions-against-nord-stream-2-as-contrary-to-international-law/>, (05.12.2022).

¹⁷ Nord Stream 1 pipeline shuts down amid German suspicion of Russia, <https://www.aljazeera.com/news/2022/7/11/gas-pipeline-shutdown-starts-amid-german-suspicion-of-russia>, (04.12.2022).

¹⁸ Nord Stream 1 operator says it found craters at damaged pipeline site, <https://www.reuters.com/business/energy/nord-stream-1-operator-says-it-has-completed-initial-data-gathering-damaged-2022-11-02/>, (04.12.2022).

մատակարարումը «Հյուսիսային հոսք 2»-ի խողովակաշարներից մեկով, Գերմանիան, սակայն, հայտարարել է, որ չի ընդունի ռուսական գազը «Հյուսիսային հոսք 2» գազատարով, «որը դարձել է ուկրաինական ճգնաժամի բռնկման կետ»¹⁹:

Թեպետ Եվրոպական կողմը հաճախ հայտարարում է, որ ունի բավականաչափ պահեստավորված գազ ձմռանը գոյատևելու համար, այնուամենայնիվ ԵՄ երկրներում էներգակիրների գների վերաբերյալ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեկ տարի առաջվա համեմատ գազի և էլեկտրաէներգիայի վճարները գրեթե կրկնապատկվել են: Էներգիայի գների վերջին ինդեքսի համաձայն՝ գազի վարձերն աճել են 111%-ով, իսկ էլեկտրաէներգիայի վարձերը՝ 69%-ով²⁰:

«Հյուսիսային Հոսքի» գործարկման և «Հյուսիսային Հոսք 2»-ի հավաստագրման դադարեցմամբ Եվրոպական միությունը՝ մասնավորապես Գերմանիան, կորցրեց տարեկան 110 միլիարդ խորանարդ մետր գազ, որը բավական մեծ քանակություն է էներգետիկ մի շարք առանցքային խնդիրների լուծմանը խոչընդոտելու համար: Այդ գազատարներով ռուսական գազի՝ Եվրոպա տեղափոխման դադարեցումը նպաստել է ԵՄ էներգետիկ ճգնաժամին, որի հաղթահարման հնարավորությունները տեսանելի ապագայում չեն ուրվագծվում: Ճիշտ է, զգալիորեն մեծացել են ներմուծվող հեղուկ գազի ծավալները, սակայն գների մի քանի անգամ բարձրացումը լուրջ հեռանկարներ չեն խոստանում յո մատակարարումների համար: Ընդ որում, զարմանալի է, որ ԵՄ պաշտոնյաները չեն նկատում՝ ճգնաժամի ընթացքում Եվրոպային միջնորդված վերավաճառվում է ռուսական գազը՝ մի քանի անգամ ավելի թանկ գնով: Մասնավորապես, դա վերաբերում է

¹⁹Putin offers Europe gas through Nord Stream 2, <https://www.dw.com/en/putin-offers-europe-gas-through-nord-stream-2-germany-declines/a-63416138#:~:text=Nord%20Stream%20%20never%20became,Europe%20should%20decide%20their%20fate.,> (04.12.2022).

²⁰ Gas price cap deal eludes EU countries, for now, <https://www.reuters.com/business/energy/eu-seeks-break-impasse-over-gas-price-caps-no-regret-plan-floated-2022-10-12/>, (04.12.2022).

Թուրքիային, որը «Թուրքական հոսք» գազատարով Ռուսաստանից ստանում է գրեթե 40 միլիարդ խորնարդ մետր գազ և դրա մի մասը վերավաճառում է Եվրոպացիներին, իսկ Չինաստանը, որը ստանում է արդեն Եվրոպա չուղարկվող ռուսական գազի մի մասը, այն վերածում է հեղուկ գազի և նույնպես վերավաճառում է Եվրոպային:²¹

Ադրբեջանը ԵՄ գազային ճգնաժամի հանգուցալուծման ճանապարհին

Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանը ոչ միայն նշանավորվեց աշխարհաքաղաքական այլև տնտեսական զգալի տեղաշարժներով: Էներգետիկ՝ մասնավորապես գազի հետ կապված հարցերը, դարձան խորհրդային ժառանգության ամենավիճելի խնդիրները²²:

ԽՍՀՄ փլուզումով վերացավ երկբևեռ աշխարհակարգը և հետխորհրդային և ԽՍՀՄ ազդեցության ներքո գտնված տարածքներում առաջացավ ուժային վակուում և այն զբաղեցնելու հնարավորություն՝ ինչպես ձևավորվող աշխարհակարգում դիրքերի, այնպես էլ տարածաշրջանային ազդեցության ձգտող մի շարք երկրների ու կազմակերպությունների համար, մասնավորապես, ԱՄՆ-ն, ԵՄ-ն, Թուրքիան, Իրանը և այլն²³: Այդուհանդերձ, ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած առաջին տասնամյակում Հարավային Կովկասը առաջնային տեղ չէր զբաղեցնում ԵՄ-ի հետաքրքրությունների շրջանակներում: Կովկասի նկատմամբ ԵՄ-ի դիրքորոշման փոփոխությունը կապված էր համաաշխարհային զարգացումներում Կովկասի աճող աշխարհաքաղաքական

²¹ Թորոսյան Տ., Նոր աշխարհակարգի..., նշվ. աշխ.

²² Otrowski W., The Twenty Years' Crisis of European Energy Security: Central and Eastern Europe and the US, *Geopolitics*, 27, 3, 2020, 875-897.

²³ Թորոսյան Տ., Վարդանյան Ա., Եվրասիական կենտրոնի մեծ աշխարհաքաղաքական վերաբեռնավորման ավարտը, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 1(13), 2020, 5-52:

կարևորության հետ: Դրան հաջորդեցին արևելյան ուղղությամբ ԵՄ-ի ընդլայնումը, ինչպես նաև Կովկասում ԵՄ-ի փոխկապակցված հետաքրքրությունների ի հայտ գալը կառավարման, անվտանգության և հատկապես էներգետիկայի ոլորտներում²⁴: Եվրամիությունը հույս ուներ, որ կասպյան ավազանի էներգետիկ պաշարները կարևոր դերակատարություն կունենան իր ներկրումների աղբյուրների բազմազանեցման ծրագրերում:

Հարավային Կովկասի հետ համագործակցելու ԵՄ-ի ստեղծած առաջին հարթակը 2004թ. կազմավորված Եվրոպական հարևանության քաղաքականությունն էր, ապա՝ 2008թ. գործարկված Արևելյան գործընկերությունը: Հետագայում պարզ դարձավ, որ վեց արևելյան հարևանները տարբեր նպատակներ ունեն նախաձեռնության հետ կապված: Դրանցից երեքը (Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան) ցանկանում էին ավելի սերտ հարաբերություններ հաստատել ԵՄ-ի հետ՝ ընդհուպ մինչև լիարժեք անդամակցություն, Բելառուսը նախընտրեց Եվրասիական տնտեսական միությունը, իսկ Հայաստանը փորձում է աշխատել երկու ուղղություններով էլ և թեպետ անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանը, սակայն լրջորեն հետաքրքրված է ԱլԳ շրջանակներում համագործակցության հնարավորություններով, ի տարբերություն Ադրբեյջանի, որը կորցրել էր հետաքրքրությունը ծրագրի նկատմամբ՝ քաջ գիտակցելով, որ անկախ ամեն ինչից, Բրյուսելը հետաքրքրված է իր էներգակիրներով: Ուստի, գործընկերությունը գլխավորապես կենտրոնանում էր երկրի էներգետիկ ոլորտների վրա²⁵:

ԵՄ էներգետիկ անվտանգության լուծումների փնտրտուքը Հարավային Կովկասում մեծացնում է տարածաշրջանի նշանակությունը, որը կարևոր ցամաքային կամուրջ է Ասիայի և Եվրոպայի միջև: ԵՄ էներգակիրների աղբյուրների և տարանցման ուղիների

²⁴ Գևորգյան Ն., նշվ. աշխ.:

²⁵ Գևորգյան Ն., ԵՄ քաղաքականությունը Հարավային Կովկասում. Տարբերակման բարդ ուղին, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 1(5) 2016, 53-80:

բազմազանեցման ծրագրերը՝ Կասպյան ավազանի միջոցով, զգալիորեն ուժեղացնում են Ադրբեջանի նշանակությունը՝ որպես տարանցիկ երկիր և էներգակիրներ արտահանող²⁶, թեև դեռ պահանջվում է պարզել՝ դա գրավիչ եվրոպական երազանք է, թե՞ պատրանք:

Այսպիսով, Ադրբեջանը, լինելով Կասպյան ավազանի պետություն, ԵՄ-ի կողմից դիտարկվում է որպես իրական հնարավորություն կասպյան էներգակիրների մատակարարման աղբյուրների և ուղիների բազմազանեցման հարցում: Այս համոզմունքը ավելի ամրապնդվեց, երբ 1990-ականներին կնքված պայմանագրերի հիման վրա կառուցվեց և 2005թ. շահագործման հանձնվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղը, իսկ 2006թ.՝ Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազամուղը²⁷: ԵՄ-Ադրբեջան էներգետիկ համագործակցությունը ընդայնելու համար 2010թ. սկսեց քննարկվել «Հարավային գազային միջանցք» ծրագիրը, որն, ըստ կողմերի, էական ազդեցություն պիտի ունենար ԵՄ էներգետիկ ուղիների ու աղբյուրների բազմազանեցման հարցում, սակայն երբ կողմերը բանակցային սեղանի շուրջ սկսեցին քննարկել ծրագրի նախագծերն առանձին-առանձին, պարզ դարձավ, որ դրանցից մի քանիսը տարբեր պատճառներով չեն կարող իրականացվել:

Հարավային գազային միջանցքի ձևավորման խնդիրները

Թեպետ Հարավային գազային միջանցք ծրագիրն ուներ նաև քաղաքական կոմպոնենտ՝ ցույց տալ ՌԴ-ին, որ նա միակ խաղացողը չէ Կասպյան ավազանում, պահպանել ԵՄ հետաքրքրությունը Հարավային Կովկասի՝ մասնավորապես Ադրբեջանի նկատմամբ, այնուամենայնիվ միջանցքի շրջանակնե-

²⁶Terzyan A., Normative and Political Dimensions of the European Union's Energy Policy: The Case of the South Caucasus, *Armenian Journal of Political Science*, 2014, 1(1), 123-136.

²⁷Թորոսյան Տ., Արշակյան Գ., Ռուս թուրքական մրցակցություն թե՞ համագործակցություն, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1(5), 2016, 5-34:

րում առաջարկված նախագծերը մեկ կարևոր խնդիր ունենին՝ բավարարել ԵՄ էներգետիկ կարիքները: Հետազոտության խնդրո առարկայի տեսակետից կարևոր է ուսումնասիրել միջանցքի չիրականացված նախագծերից մեկը՝ Նաբուկկոն, որը կարող էր բավականին լուրջ դեր խաղալ ԵՄ էներգետիկ աղբյուրների ու ուղիների բազմազանեցման հարցում:

2000-ականների սկզբին նախատեսվեց «Նաբուկկո» նախագիծը, որը պետք է էրզրումից Ավստրիա հասցնել և այնտեղից Եվրոպական երկրներին մատակարարել տարեկան 31 մլրդ. խորանարդ մետր գազ, որը մատակարարող հիմնական պետություններն էին Ադրբեջանը, Թուրքմենստանը և Ղազախստանը: Մոտ մեկ տասնամյակ «Նաբուկկոն» քննարկելուց և գազատարի զգալի հատվածի կառուցումից հետո պարզ դարձավ, որ այն մոտ ապագայում իրականացվելու շանսեր չունի, քանի որ առկա է ռեսուրսների խնդիր²⁸: Եթե Թուրքմենստանի և Ղազախստանի խնդիրը կապված էր Կասպից ծովի իրավական կարգավիճակի չլուծված խնդիրների հետ, ինչն անհնարին էր դարձնում այդ երկրներից էներգակիրների տեղափոխումը Եվրոպա, ապա Ադրբեջանի պարագայում պատճառը գազի ոչ բավարար քանակն էր: Պարզ է, որ «Հարավային գազային միջանցքը» իրականում «Հարավկովկասյան», «Անդրանատոլիական» և «Անդրադրիատիկ» խողովակաշարերի ամբողջությունն է՝ սահմանափակ ծավալներ ունեցող ադրբեջանական գազը Թուրքիա և Եվրոպա տեղափոխելու համար: Այդ երեք գազատարների կառուցուման աշխատանքները ավարտին են հասցված, այնուամենայնիվ օրակարգային է մնում այն հարցը, արդյո՞ք «Հարավային գազային միջանցքով» տեղափոխվող գազը կարող է իրական այլընտրանք դառնալ ռուսական գազին:

Այժմ «Հարավային գազային միջանցքը» մատակարարում է տարեկան 16 միլիարդ խորանարդ մետր գազ, որից միայն 10 միլիարդ խորանարդ մետր գազը Եվրոպայի համար, իսկ մնացածը՝

²⁸ **Siddi M.**, The EU's Botched Geopolitical Approach to External Energy Policy: The Case of the Southern Gas Corridor, *Geopolitics*, 2019, **24**, 1, 124-144.

Թուրքիայի: Նախատեսվում է «Հարավային գազային միջանցքի» թողունակությունը կրկնապատկել մինչև 2027թ.²⁹ տարեկան առնվազն 20 միլիարդ խորանարդ մետր ԵՄ մատակարարելու նպատակով²⁹: Բայց արդեն պարզ է, որստանձնած խոստումը՝ Եվրոպա արտահանվող գազի ծավալի ավելացումը մինչև 20 մլրդ, Ադրբեջանը չի կարող կատարել սեփական պաշարների հաշվին³⁰ ԵՄ գազի սպառումը 2021թ. հասել է տարեկան 412 միլիարդ խորանարդ մետրի³¹, և տարեկան 10, անգամ խոստացված 20 միլիարդ խորանարդ մետր գազը լուրջ դերակատարություն չի ունենա ԵՄ էներգետիկ աղբյուրների բազմազանեցման հարցում: Թեև եվրոպական հռետորաբանության մեջ հաճախ իներցիայով Հարավային գազային միջանցքը կարևորվում է:

Հաշվի առնելով Ադրբեջանի սահմանափակ էներգետիկ ռեսուրսները, պարզ է դառնում, որ ադրբեջանական գազը չի կարող իրական այլընտրանք լինել ռուսական գազին, իսկ «Հարավային գազային միջանցքը»՝ նույնիսկ կրկնապատկված հզորությամբ, նկատելի ազդեցություն չի կրող ունենալ ԵՄ էներգետիկ ճգնաժամի հաղթահարման գործընթացներում:

ԵՄ դիլեման և էներգետիկ ճգնաժամը. վերադարձ դեպի Ռուսաստան

2022թ. փետրվարին սկսված ռուս-ուկրաինական պատերազմը, «Հյուսիսային Հոսք-2»-ի սառեցումը, ապա «Հյուսիսային Հոսքի» գործունեության դադարեցումը ԵՄ տնտեսական

²⁹ EU and Azerbaijan to double capacity of Southern Gas Corridor, [https://euneighbourseast.eu/news/latest-news/eu-and-azerbaijan-to-double-capacity-of-southern-gas-corridor/#:~:text=The%20agreement%20includes%20a%20commitment,the%20EU%20annually%20by%202027,\(05.12.2022\).](https://euneighbourseast.eu/news/latest-news/eu-and-azerbaijan-to-double-capacity-of-southern-gas-corridor/#:~:text=The%20agreement%20includes%20a%20commitment,the%20EU%20annually%20by%202027,(05.12.2022).)

³⁰ Թորոսյան Տ., Նոր աշխարհակարգի..., նշվ. աշխ.

³¹ Quarterly report On European gas markets with focus on 2021, an extraordinary year on the European and global gas markets, Energy, volume 14, issue 4, 2021, pp. 1-51:

օրակարգում առաջին պլան մղեցին էներգետիկ ուղիների և աղբյուրների բազմազանեցման հարցը:

Բնական է, որ Ռուսաստանից ԵՄ գազի ներկրումը խիստ նվազել է, քանի որ այլևս չի գործում «Հյուսիսային Հոսքը»՝ տարեկան 55 միլիարդ խորանարդ մետր գազ թողունակությամբ, այնուամենայնիվ ԵՄ-ն դեռ չի գտել այլ աղբյուրներ ռուսական գազի մատակարարման բացը լիարժեք լրացնելու համար:

ԵՄ-ի համար գազի այլ մատակարարներ են հանդիսանում են Նորվեգիան, որն ապահովում է ներմուծման ավելի քան 22%-ը, Ալժիրը՝ ավելի քան 10%-ը: ԱՄՆ-ից, Քաթարից և Նիգերիայից ԵՄ-ն ներմուծում է հեղուկ բնական գազ՝ ապահովելով ներմուծման մոտ 25%-ը³²: Ադրբեջանը ապահովում է ԵՄ գազի ներմուծման մոտ 2%-ը:

Պաշտոնական Բրյուսելը մի շարք հուշագրեր է ստորագրել ԱՄՆ-ի, Իսրայելի, Եգիպտոսի, Ադրբեջանի և մի քանի այլ պետությունների հետ՝ գազի լրացուցիչ մատակարարումների վերաբերյալ: Այս հուշագրերը, սակայն, պարտադիր իրավական ուժ չունեն, և եթե մատակարարները չկարողանան ապահովել խոստացված քանակը, ԵՄ-ն չի կարող կիրառել լծակներ՝ իրավիճակը շտկելու համար³³: Ավելին, ԱՄՆ-ից, Քաթարից և Նիգերիայից հեղուկ գազի քանակի ավելացումը մարտահրավերային է ԵՄ-ի համար, քանի որ հեղուկ գազի ստացման գործընթացը ներդրումներ և ժամանակ է պահանջում, և առկա ենթակառուցվածքները պետք է հարմարեցվեն այդ նպատակին: Հետևաբար դժվար կլինի մոտակա տարիներին զգալիորեն ավելացնել հեղուկ գազի ներկրման քանակը: Ավելին, հեղուկ գազի գները մի քանի անգամ գերազանցում են մինչև ճգնաժամը Եվրոպա

³² Infographic - Where does the EU's gas come from?, <https://www.consilium.europa.eu/en/infographics/eu-gas-supply/>, (05.12.2022).

³³ EU's power crunch: What countries will fill the gap left by Russian gas?, <https://www.euronews.com/my-europe/2022/06/21/eus-power-crunch-what-countries-will-fill-the-gap-left-by-russian-gas>, (05.12.2022).

արտահանված խողովակաշարային բնական գազի գները, ինչը ևս մեկ խոչընդոտում է յո՛՛ ճնապիռով ճգնաժամի հաղթահարմանը:

ԵՄ-ի համար իրական տեսական այլընտրանք կարող էր հանդիսանալ իրանական և թուրքմենական գազը՝ առկա պաշարների ծավալների առումով: Այնուամենայնիվ այս երկրներից դեպի Եվրոպա գազի ներկրման հետ կապված առկա են մի շարք լուրջ, տեսանելի ապագայում անհաղթահարելի խոչընդոտներ:

Իրանից Եվրոպա գազի մատակարարման համար 2000-ականների սկզբին առաջարկված գազատարի նախագիծը նախատեսում էր Եվրոպա արտահանել տարեկան 37-40 միլիարդ խորանարդ մետր գազ, այնուամենայնիվ Իրանի նկատմամբ պատժամիջոցների առկայությունը սառեցրին գործընթացը: Թուրքմենստանի պարագայում խնդիրն այլ է. Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիան չի ստեղծել իրավական հիմք Կասպից ծովի հատակով թուրքմենական գազը ԵՄ տեղափոխելու համար:

Էներգետիկ աղբյուրների և ուղիների բազմազանեցման հարցը ԵՄ-ն կարող էր լուծել նաև արաբական երկրներից էներգակիրների ներմուծմամբ: Սակայն Մերձավոր Արևելքում լարվածության խորացումն ու նոր՝ սիրիական օջախի ավելանալը, Իրանի հետ հարաբերությունների լիարժեք կարգավորման հեռանկարների անհասակությունը և Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին հարցը գրեթե բացառում են տեսանելի ապագայում այդ տեսական հնարավորությունների օգտագործումը³⁴:

ԵՄ-ն կանգնած է դիլեմայի առաջ. մի կողմից էներգետիկ ճգնաժամը սկիզբ է դրել տնտեսական ճգնաժամի, մյուս կողմից կա իրական հնարավորություն հաղթահարելու ճգնաժամը՝ գործարկելով «Հյուսիսային Հոսք 2» գազատարը: Այնուամենայնիվ ԵՄ որդեգրած արժեքները, իսկ ավելի հաճախ արտաքին

³⁴ Թորոսյան Տ., Արշակյան Գ., Ռուս թուրքական մրցակցություն թե՛ համագործակցություն, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1(5), 2016, 5-34:

Ճնշումները անհնար են դարձնում գազատարի շահագործումը: Ենթադրվում է, որ ԵՄ էներգետիկ ճգնաժամը կշարունակվի մինչև ռուս-ուկրաինական պատերազմի ավարտը, իսկ ճգնաժամի հանգուցալուծումը մեծապես կախված է ռուս-ուկրաինական պատերազմի ելքից:

Եզրակացություն

ԵՄ գազային ճգնաժամի ծագման, մարտահրավերների և դրանց հաղթահարման հնարավորությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ

1. 2022թ. սկսված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով «Հյուսիսային Հոսքի» աշխատանքների և «Հյուսիսային Հոսք 2»-ի հավաստագրման դադարեցմամբ՝ որպես Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների մի մաս, Եվրոպական միությունը կորցրեց տարեկան 110 միլիարդ խորանարդ մետր գազ, որը բավական մեծ քանակություն է ԵՄ զգալի թվով անդամ երկրների էներգետիկ խնդիրների լուծման տեսակետից: Աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությամբ Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը և դր հետևանքով գազատարների աշխատանքի դադարեցումը դարձավ ԵՄ էներգետիկ ճգնաժամի առանցքային պատճառ:

2. Եվրոպական միությունը կարևորում է Ադրբեջանի դերակտրությունը՝ ԵՄ էներգակիրների ուղիների և աղբյուրների բազմազանեցման խնդիրները լուծելու գործընթացներում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Ադրբեջանի սահմանափակ էներգետիկ ռեսուրսները, ակնհայտ է, որ ադրբեջանական գազը չի կարող իրական այլընտրանք լինել ռուսական գազին, իսկ «Հարավային գազային միջանցքը»՝ նույնիսկ կրկնապատկված ծավալով Եվրոպա գազ արտահանելու դեպքում, չի կրող նկատելի ազդեցություն ունենալի ԵՄ էներգետիկ ճգնաժամի հաղթահարման գործընթացներում:

3. ԵՄ-ն դեռևս չի գտել ռուսական գազին փոխարինող այլ աղբյուրներ: Թեպետ Բրյուսելը մի շարք համաձայնագրեր է ստորագրել ԱՄՆ-ի, Իսրայելի, Եգիպտոսի, Ադրբեջանի և մի քանի այլ պետությունների հետ՝ գազի լրացուցիչ մատակարարումների վերաբերյալ, և սկսել է ենթակառուցվածքներ ստեղծել հեղուկ բնական գազ ներկրելու համար, այնուամենայնիվ այդ գործընթացները մոտ ապագայում չեն կարող էական նշանակություն ունենալ ԵՄ էներգետիկ ճգնաժամի լուծման հարցում: Ամենաարագ և ԵՄ-ի համար շահավետ լուծումը կլինի «Հյուսիսային Հոսք 2»-ի շահագործումը: Այնուամենայնիվ ԵՄ-ի վրա արտաքին ճնշումները անհնար են դարձնում գազատարի շահագործումը: Ենթադրվում է, որ ԵՄ էներգետիկ ճգնաժամը կշարունակվի մինչև ռուս-ուկրաինական պատերազմի ավարտը, իսկ ճգնաժամի հանգուցալուծումը մեծապես կախված է ռուս-ուկրաինական պատերազմի ելքից:

The Role of Azerbaijan in the Process of Overcoming the Gas Crisis of the European Union

FLORA MIRZAKHANYAN

Brusov State University

The increasingly deepening geopolitical confrontation between the West and Russia, which reached its peak during the Russian-Ukrainian war, has caused crisis in various dimensions, particularly the energy security of the European Union. Europe, traditionally highly dependent on Russian gas, has refused to import the Russian pipeline gas following the sanctions imposed on Russia and thereby faced a number of difficulties. In a given situation, the EU officials are trying to find new ways to import gas from other exporting countries, but there are limited opportunities due to geographic and political problems. The article discusses the causes and possible outcomes of the EU gas crisis. In the context of overcoming the crisis, reference is made to the EU-Azerbaijani energy relations, particularly the "Southern Gas Corridor". Its possibilities are considered from the point of view of meeting the European needs, as well as the launch of the "North Stream-2" gas pipeline as a genuine possibility in overcoming the EU gas crisis.